ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2016

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է գրվում *օ*.**

1) ամեն-րյա, ան-թ, հանր-գուտ, արծաթազ-ծ
2) սառն-րակ, չ-ժանդակել, բն-րրան, կ-գնի
3) ան-թևան, մի-րինակ, օրեց-ր, հանապազ-րյա
4) նախ-րյակ, մեղմ-րոր, աման-րյա, ապ-րինի

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ձ*.**

1) կուր-ք, տարեդար-, վր-ին, գուղ-
2) ար-ակուրդ, պախուր-, հանդեր-անք, գլուխկոն-ի
3) փղ-կալ, տր-ակ, դեղ-ենի, դեր-ան
4) փոր-անք, ամբար-իչ, ան-կալի, ար-ան

3 **Ո՞ր շարքի ոչ մի բառում *չի* գրվում *ը*.**

1) հոտ-նկայս, ակ-նբախ, մարտ-նչել, օր-ստօրե
2) ան-նկճելի, երկ-նչել, կր-նկակոխ, շր-խկոց
3) գործ-նկեր, առ-նթեր, ակ-նբախ, ին-սուն
4) ան-ստույգ, առ-նչություն, ակ-նթարթ, կոր-նթարդ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ա*.**

1) Սա-վել, հա-պատրաստից, բա-բասել, ա-բասիր
2) թ-բկաթաղանթ, շա-փուր, ս-բուկ, ա-փույթ
3) սուսա-բար, փա-փուշտ, ա-պաճույճ, ա-բարտավան
4) ա-բոխ, ա-ֆիթատրոն, ա-բարձիչ, ը-բոշխնել

5 **Ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանում տրված բառերն ու դրանց բացատրությունները:**

1. շարական	ա. ստեղծագործական ներշնչանք
2. ջնարակ	բ. հոգևոր երգ
3. ոստան	գ. սարդի հյուսած ցանց
4. ոստայն	դ. խեցեգործական առարկաների ապակեներկ
5. մուսա	

1) 1-բ, 2-դ, 4-գ, 5-ա
2) 1-բ, 2-դ, 3-գ, 5-ա
3) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ
4) 1-գ, 2-ա, 3-գ, 4-բ

6	**Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) քանքար - անկյունաքար, բնիկ - երկրացի, բողոքել - տրտնջալ, բովանդակ - ամբողջ
2) բոսորաթույր - կարմրագույն, բովել - խարկել, գազանաբարո - վայրենի, գայթակղել – հրապուրել
3) բլուր - բարձունք, անտունի - տնանկ, բծախնդիր - քմաճաշակ, բյուր - բազմաթիվ
4) բնազդորեն - ինքնաբերաբար, բնակարան - կացարան, ամոլ - չբեր, բնաջնջվել - կործանվել

7	**Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ կա:**

1) Պողպատյա կամքի տեր այդ մարդը վշտից կուչ էր եկել:
2) Երբ անցնում էր փողոցով, ամեն կողմից նայում էին դողէրոցքով ախտահարված մանուկներ՝ խոր ընկած ակնակապիճներով:
3) Բարձրադիր սարավանդը, որի վրա կառուցված էր հինավուրց ամրոցը, շրջապատված էր բնության գեղեցիկ տեսարաններով:
4) Օրիորդն այնպես էր պճնվել, ասես զարդարված տոնածառ լիներ:

8	**Տրված բառերի բառակազմական վերլուծություններից ո՞րն է սխալ.**

1) հետաքննչական= հետ+ա+քն(ի)ն + (ի)չ+ական
2) հայելազարդ= հայ+ել+ա+զ +արդ
3) առաջնություն= առ+աջ+(ի)ն+ություն
4) հետախուզել= հետ+ա+ խուզել

9	**Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

1) պատուհաններ, պատճեններ, աղախիններ, շեղջակույտեր
2) աշխատավարձներ, հովանավորներ, ձկնկուլներ, համերգաշարեր
3) ծաղկանախշեր, ապառաժներ, սաղավարտներ, քարհատներ
4) մկներ, դելֆիններ, աստղեր, թագակիրներ

10	**Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *վա* հոլովման:**

1) հունիս, տարի, առավոտ, ճաշ
2) երբ, ամառ, այսօր, ժամանակ
3) ամիս, վայրկյան, վաղուց, կեսգիշեր
4) շաբաթ, կեսօր, միջնադար, առաջ

11 **Ո՞ր տարբերակում դիմորոշ հողի գործածություն կա:**

1) Բայց ո՞ւր էր մայրս դալուկ,
   Ա՜խ, նա էլ էր որբացել,
   Արցունք դարձել ու մանուկ
   Աչքիս մեջ էր մնացել:
2) Նվաստս դարձա մատնության գործիք,
   Եվ ներում չունեմ էլ ես հավիտյան:
3) Վերջերս նրան քիչ էի հանդիպում. խուսափում էր ինձնից:
4) -Քնքուշ լուսնի շուշան-փոշին
   Մաղեց հեզ գետի վրա,
   Մեղմիկ խշշաց ցորեն, ցողուն,
   -Սիրտս անդորր կծփա:

12 **Ո՞ր նախադասության մեջ բաղդատական աստիճանով դրված ածական կա:**

1) Իմացա՛ծ եղիր, որ ամենահզորը քո աստվածությունն է:
2) Իրենք թեկուզ մի թեթև բարկացան, բայց դա լավ էր եղել ավելի, քան բոլոր խնամախոսներով ու նշանդրեքներով ամուսնությունները:
3) Կորուստն այնքան մեծ էր, որ նրանց համար խելացի ու գործնական էին բոլոր խորհուրդները:
4) Երևան են ժամանել յոթանասուն խոշորագույն աստղաֆիզիկոսներ:

13 **Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են հոլովվում:**

1) ինքը, մենք, դուք, ովքեր
2) մեկմեկու, միմյանց, ով, ոմանք
3) նա, ես, ոչ ոք, ոմն
4) նրանք, իրենք, սրանք, այս

14 **Ո՞րը պարզ համառոտ նախադասություն *չէ:***

1) Նոր հետևություններ արվեցին:
2) Կյանքը զարմանալի է:
3) Փաստն անտեսված է:
4) Գործը գլուխ եկավ:

15 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Հայրս ինձ պատմում էր քաղաքացիական կռիվներից, որոնց մասնակցել էր Ռուսաստանում, և նա գտնում էր, որ պատերազմի ամենածանր տեսակը քաղաքացիական պատերազմն է:

1)


2)


3)


4)


16 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

1) Իմ ունեցածի մի զգալի մասը կորավ այդ գիշեր, երբ ես այդքան անփույթ էի ոչ միայն իմ անցյալի ու ներկայի, այլև ապագայի նկատմամբ:
2) Եվ բնական էր, որ նրա մտքերը, ցանկություններն ու ձգտումները կենտրոնանում էին միայն մի մտքի շուրջ:
3) Կարծում եմ, որ մեր կյանքում մշտապես միանում են ճակատագիրն ու կամքի ազատությունը:
4) Իսկ դա էլ հենց առողջության և ուժի նշաններն են՝ բնության ամենաքնքուշ պարգևները:

17 **Քարդ նախադասություններից որի՞ բաղադրիչ նախադասություններն են միմյանց հետ կապակցված հարաբերական դերանունով:**

1) Եվ ո՞վ կասի՝ ինչո՞ւ ես դու, և ո՞վ կասի, թե ուր հասար...
2) Ով իմանա՝ ո՛ւր ընկանք,
   Քանի՛ օրվա հյուր ընկանք:
3) Ո՞վ իմանա՝ ո՛ր սիրունի բիբն ես կոխում դու հիմի…
4) Ով եկել էր՝ թողած հեռուն անծայրածիր մութը գյուղի,
   Բերել էր իր մկաններում բեղմնավորված ուժը հողի:

18 **Նախադասության ի՞նչ անդամ է դերբայական դարձվածը:**

Ռուբեն Զարյանը օր առ օր գրի էր առել վերջին քառասուն տարում մեր արվեստի մեծերից տեսածն ու լսածը:

1) որոշիչ
2) հատկացուցիչ
3) ենթակա
4) ուղիղ խնդիր

19 **Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

Աղջիկը այդ պահը հիշելիս դարձյալ շիկնում էր:

1) Հենց որ աղջիկը այդ պահը հիշում էր, դարձյալ շիկնում էր:
2) Աղջիկը, երբ այդ պահը հիշում էր, դարձյալ շիկնում էր:
3) Երբ աղջիկն այդ պահը հիշում էր, դարձյալ շիկնում էր:
4) Աղջիկը, երբ այդ պահը հիշեց, դարձյալ շիկնեց:

20 **Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Տաքանում էի՝ հիացած աչքերս չհեռացնելով այդ երկնային գեղեցկությունից, երբ զգացի մի քաղցր հոտ՝ մինչ այդ անծանոթ մարդկային հոտոտելիքին:
- Չանցած մի պահ՝ նորից սկսեց երգել սոխակը՝ հաղթական երգիչը:
- Մի գիշեր՝ մի քամոտ գիշեր, սարերից անսանձ փչում էր քամին, ծեծում դուռն ու պատուհանները:
- Օր ու գիշեր ճանապարհ կտրելով՝ անապատների տատասկներից զզգզված՝ հասավ նա մի օր քաղաքի պարիսպներին:
- Դրսում վառեցին խարույկները՝ ցլերին ողջակիզելու, սակայն, մրրկաշունչ հողմ բարձրացավ, և բոցերը հանգան:

1) չորսում
2) հինգում
3) մեկում
4) երեքում

21 **Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Կոստանդինը, կրթությամբ և կրոնով կաթոլիկ և նաև եվրոպացի լինելով, հենց որ թագավոր դարձավ, իր վարմունքով ատելի եղավ ժողովրդին, քանի որ նա իր արքունիքի մեջ մտցրեց եվրոպական խորթ սովորություններ: Ժողովուրդը և զորքը, չկարողանալով տանել այս անկարգությունները, նրան սպանեցին մեկ տարի թագավորելուց հետո:
2. Քանի որ Լևոն Ե-ի մահից հետո Ռուբինյան թագավորների ցեղը սպառված էր, նրանց հեռավոր ազգականներից մեկը՝ Կոստանդին անունով, ընտրվեց հայոց թագավոր: Այս Կոստանդինը որդին էր Լևոն Գ-ի Զապել աղջկա, որն ամուսնացած էր Կիպրոսի թագավորի եղբոր հետ:
3. Այս ամենից հետո հայերը նոր միայն հասկացան օտարազգի և լատինական թագավորի՝ Կիլիկիայի գահի վրա նստեցնելու վնասները և թագավոր ընտրեցին Կոստանդին Դ-ին, որը Հեթում իշխանի որդին էր և մոր կողմից Ռուբինյան էր: Նա խաղաղեցրեց կրոնական երկպառակությունները և արգելեց հայոց եկեղեցում կաթոլիկական ծեսերը՝ այսպիսով խաղաղեցնելով ժողովրդի դժգոհությունը:
4. Հայերը, այս ամենից չխրատվելով, թագավոր ընտրեցին նրա եղբայր Գվիդոնին, որը, իր եղբոր վարմունքին հետևելով, ավելի ուժ տվեց կաթոլիկությանը և սկսեց պապի հետ դեսպանախոսություններ անել: Գվիդոնը ևս արժանացավ իր եղբոր ճակատագրին:

1) 2, 1, 3, 4
2) 2, 4, 1, 3
3) 1, 2, 3, 4
4) 2, 1, 4, 3

22 **Ձախ կողմում բերված մտքերից յուրաքանչյուրը Ոսկեդարի հայ մատենագրության հինգ խոշոր պատմիչներից որի՞ երկին է վերաբերում:**

ա. Շարադրում է Վարդանանց պատերազմի հերոսական դրվագները (451 թ.):
բ. Հիմնականում ընդգրկում է Հայաստանում քրիստոնեության տարածման շրջանը, երբ Տրդատ Մեծ թագավորի և Գրիգոր Լուսավորչի ջանքերով մեր երկրում քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն (301թ.):
գ. Նկարագրում է 460-480-ական թվականների պատմական իրողությունները, մասնավորապես՝ Վահանանց պատերազմը:
դ. Պատմությունը սկսվում է Տրդատ Մեծից և հասնում մինչև 387 թվականը, երբ Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև:
ե. Գրքի շնորհիվ անդառնալի կորստից փրկվել են հայոց հին բանահյուսության մի շարք նմուշներ:

1. Ագաթանգեղոս, «Հայոց պատմություն»
2. Եղիշե, «Վարդանի և հայոց պատերազմի մասին»
3. Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն»
4. Ղազար Փարպեցի, «Հայոց պատմություն»
5. Փավստոս Բուզանդ, «Հայոց պատմություն»

1) ա-2, բ-1, գ-5, դ-4, ե-3
2) ա-3, բ-1, գ-4, դ-5, ե-2
3) ա-2, բ-1, գ-4, դ-5, ե-3
4) ա-1, բ-2, գ-4, դ-5, ե-3

23 **Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

ա. Զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն
բ. Ի ստրկաց կարգի պահել
գ. Կամ ծառայեցուցանելով
դ. Եվ թշնամութիւն յավիտենական
ե. Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել
զ. Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց

1) ա, զ, գ, բ, ե, դ
2) ե, դ, գ, բ, զ, ա
3) ա, բ, գ, դ, ե, զ
4) զ, ա, գ, բ, դ, ե

24 **«Սասնա ծռեր» էպոսում ո՞ւմ հետ է ամուսնանում Բաղդասարը, և ո՞րն է նրա վերջին հանգրվանը:**

1) Ամուսնանում է Խալիֆայի զարմուհիներից մեկի հետ և մնում Բաղդադում:
2) Գնում է Գյուրջիստան, հավանում տեղի թագավորի աղջկան, կռվում քառասուն փահլևանների դեմ և նրանց հաղթելով՝ արժանանում արքայադստերն ու Գյուրջիստանի գահին:
3) Ամուսնանում է Դեղձուն-Ծամի քրոջ հետ և գնում է Բաղդադ:
4) Սպիտակ Դևից փրկում է Արմաղանին և ամուսնանալով հետը՝ գնում է Պղնձե քաղաք:

25 **Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում ի՞նչ ճակատագրի է արժանանում Աղասու մայրը:**

1) Սվանդուլի խանը նրան էլ Թագուհու հետ տանում է իր տուն՝ նրանց հոգսը հոգալու:
2) Որդու թաղման ժամանակ ինքնասպան է լինում:
3) Անհայտ է:
4) Գաղթի ճանապարհին մահանում է:

26 **Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի հերոս Աբիսողոմ աղան համաձայնում է լուսանկարվել, երբ՝**

1) պարզում է, որ միայն մեծ մարդիկ լուսանկար ունեն:
2) լուսանկարիչը խոստանում է ձրի նկարել:
3) իմանում է, որ ամեն մարդ պարտավոր է «իր պատկերը քաշել տալ»:
4) լուսանկարիչը, նկարագրելով իր ողբալի վիճակը, շարժում է նրա գութը:

27 **Ո՞ր բառն է բաց թողած:**

Ու կը փոթի ծովակն հոգվույս մեղմավար,
Եվ ալիք մը թևը բացած կը վազե
Գրկել ափունքն ……. ոսկի ավազե:

1) հոգուս
2) սրտիս
3) իղձիս
4) մտքիս

28 **Նշված հատվածը Ավետիք Իսահակյանի ո՞ր ստեղծագործությունից է:**

Կանաչ դաշտի պարզ հոլիկը
Շահի ոսկե քյոշքից լավ է,
Քրտինքովդ կերած հացը
Սուլթանների ճաշից լավ է:

1) «Օտար, ամայի ճամփեքի վրա»
2) «Սև-մութ ամպեր…»
3) «Աբու-Լալա Մահարի»
4) «Համբերանքի չիբուխը»

29 **Ակսել Բակունցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը.**

«Միակ ժամացույցն ինձ մոտ էր: Մի օր էլ բլրակը բարձրանալիս ոտքս սայթաքեց, ընկա սառույցի վրա, գրպանիս մեջ ժամացույցը փշրվեց և մինչև տարվա վերջ մնացի առանց ժամացույցի: Արև օրերին ստվերով էինք ժամ որոշում, թխպած ժամանակ՝ երբ հոգնեինք»:

1) «Ալպիական մանուշակ»
2) «Միրհավ»
3) «Խոնարհ աղջիկը»
4) «Մթնաձոր»

30 **Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ի՞նչ է հրամայում Հազկերտը Վարդանին նախարարների կեղծ ուրացությունից հետո:**

1) Հայաստանում մեհյաններ կառուցել
2) աջակցել Վասակին ձեռնադրելու արքա
3) մասնակցել քուշանների դեմ մղվող պատերազմին
4) հազարապետի հետ մեկնել Բյուզանդիա

31 **Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է հետևյալ հատվածը:**

Եվ արդյոք ո՞վ է երազել այդքան դաժան
- Ու լուսավոր առավոտները իմ հոգու
Ո՞վ դարձրեց - մի անկրակ իրիկնաժամ,
Ու գորշ պարան, ու երկնուղեշ փայտեր երկու:

1) «Մահվան տեսիլ»
2) «Վահագն»
3) «Դանթեական առասպել»
4) «Անվերնագիր»

32 **Ո՞րը դրամատիկական սեռի ստեղծագործություն *չէ:***

1) «Արա Գեղեցիկ» (Ն. Զարյան)
2) «Պատվի համար» (Ալ. Շիրվանզադե)
3) «Հարդագողի ճամփորդները» (Ե. Չարենց)
4) «Հին աստվածներ» (Լ. Շանթ)

33 **Տրված շարքում դերանվան քանի՞ տեսակ կա.**

այնտեղ, ողջ, ոմանք, ամենայն, մի քանի, միմյանց, ոչ մեկը, նույնքան, ինչ-որ, մենք:

34 **Տրված հատվածում քանի՞ հատկացուցիչ կա:**

Մայիսյան ամպրոպների ժամանակ, երբ անլույս պատուհանների մոտով դարպասի տակ էր հավաքվում ջուրը, մարդիկ, կարտոֆիլի վրա աճած ծիլերը մաքրելով, դրանք գցում էին իրենց բուխարիների մեջ վառվող թեժ կրակների մեջ՝ չմտածելով ոչնչի մասին:

35 **Շարքերից քանիսո՞ւմ ուղղագրական սխալ կա.**

- Արաքսյա, գայիսոն, Նաիրի, ինքնըստինքյան
- ոսպնյակ, Անանիա, միմիայն, ակնկոր
- աղյուսակ, քնքույշ, ժանեկազարդ, հարյուրյակ
- բրաբիոն, արքաորդի, միմյանց, սյունակ

36 **Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**

մակդիր, հանգավորում, անձնավորում, շրջադասություն, համեմատություն:

Քո քաղցր վիշտը, սի՛րտ իմ մենավոր,
Քո վիշտն է փռված անհուն աշխարհում,
Քո սերն է վառված և՛ պայծառ, և՛ խոր,
Քո խենթ կարոտն է ամեն տեղ լռում:

37 **Բառերից քանի՞սն են *անհոդակապ*.**

զարկերակ, այգեէտ, սարսափազդու, շաքարավազ, կարոտակեզ, բարեգործ, միգանուշ, ջրկիր, թափանիվ, առապար:

38 **Տրվածներից քանի՞սն են անկախ դերբայ.**

մտնել, ուտել, եկած, հպարտացել, փախել, սիրի, մոռացած, հանգստացնի, աղացել, հոխորտացող:

39 **Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հոմանիշ են:**

1. Ադամից ու Եվայից սկսել - աշխարհին հրաժեշտ տալ
2. ջուրը չտեսած՝ բոբիկանալ - հարսի տանը հարսանիք է, փեսի տանը հեչ խաբար էլ չեն
3. երեսից կախվել - ոտքերն ընկնել
4. լեղին ջուր կտրել - ձայնը երկինք բարձրացնել

40 **Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների շարահյուսական վերլուծության սխալ կա:**

Նա գիտեր՝ Աստված պատժում է հանցավորին և օգնում է արդար մարդուն, նաև գիտեր, որ իր թագավոր ամուսինը հանցավոր էր Ամրամի առաջ, և պիտի հաղթեր վերջինը, բայց այդ մասին ոչինչ չխոսեց:

1. **հանցավոր էր** - բաղադրյալ ստորոգյալ, **վերջինը** - ենթակա
2. **այդ մասին** - վերաբերության անուղղակի խնդիր, **ոչինչ** - ենթակա
3. **գիտեր** - պարզ ստորոգյալ, **Աստված** - ենթակա
4. **հանցավորին** - ուղիղ խնդիր, **օգնում է** - պարզ ստորոգյալ
5. **իր** - հատկացուցիչ, **թագավոր** - ենթակա

41 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական որևէ նշան *չպիտի* դրվի:**

1. Նրա բնավորության գծերը լրացնելու համար պետք է ավելացնեմ զրույցների ու քննարկումների ժամանակ նրան հատուկ անհամբերությունն ու հակառակորդների հետ վիճաբանելիս դրսևորվող կրքոտությունը:
2. Եվ ահա նրա համար ծանր այդ օրերին ինքս էլ ակամա մասնակից դարձա նրա հակառակորդների կազմակերպած հալածանքներին:
3. Պատուհանի մոտ ծերունին հին գլխարկը գլխին անձրևանոցի մեջ կուչ էր եկել և ծխում էր ու նայում դուրս:
4. Խմբագրությունում նստած էին երկու գրողները և սովորականի նման բարձրաձայն քննարկում էին ինչ-որ գործնական հարց կամ երևի բանավիճում նոր գրականության ու նրա մշակներից որևէ մեկի ստեղծագործության շուրջ:

42 **Նշել այն բառերի համարները, որոնցում երկհնչյունի հնչյունափոխություն կա.**

1. արևմտահայ, 2. լռակյաց, 3. հաճոյախոս, 4. պաճուճանք, 5. մահագուշակ, 6. ծուլամիտ, 7. չարագույժ, 8. կուսակից, 9. ջերմամեկուսիչ:

43 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ներգործական սեռի բայ կա:**

1. Հանկարծ երևաց մի կին, որը քայլում էր դեպի ճոճանակը՝ երեխան գրկած, մեջքից մի տոպրակ կախ:
2. Այդ փոքրիկ գեղեցկուհին նայողի մեջ իր թմբլիկ այտերը կծելու ցանկություն էր առաջացնում:
3. Նրա այդ համոզմունքի ամբողջացմանը նպաստում էին ամբարտավանությունը, արհամարհանքն ու սնափառությունը:
4. Ժամանակ անցավ, ու հարմարվեցին ծառի ներկայությանը:
5. Իսկ ամռանը չարաճճի երեխաները, իրենց աշխույժ գոռում-գոչյուններով կենդանացնելով կեսօրվա տաղտկալի անդորրը, մագլցեցին պատերն ի վեր:
6. Յուրաքանչյուր տարուբերումից շղթայի ժանգոտած օղակները սուր ճռռում էին՝ խախտելով շրջապատի անդորրը:

44 **Նշել թվերը՝ ըստ տողերի ճիշտ հաջորդականության:**

1. Ո՞վ է լսում հիմի ձեզ
2. Ջա՜ն, հայրենի՛ ծըղրիդներ
3. Երգիչները իմ անտես
4. Հիմի բացե՞լ են հանդես

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:**

1. Ձեղչված ենթակայով նախադասությունը միակազմ նախադասություն է:
2. Ստորոգյալը կարող է կազմված լինել մեկ կամ մեկից ավելի բառերով:
3. Նախադասության պարտադիր հատկանիշներն են հնչերանգը, ամփոփ միտքը, ենթակայի ու ստորոգյալի առկայությունը:
4. Պարզ համառոտ նախադասության մեջ բացի գլխավոր անդամներից ուրիշ որևէ բառ չի կարող լինել:
5. Անենթակա նախադասության կազմում չեն կարող լինել ենթակա և դիմավոր բայ:
6. Նախադասության մեջ ենթական և ստորոգյալը կարող են ունենալ ուղիղ և շրջուն շարադասություն:

Բ մակարդակ

46 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Տերևախիտ ճյուղերի մեջ լսվեց թռ-ունների (1) զվար-ռաձայն (2) երգը: Խ-ացին (3) արծաթագ-ծ (4) փշատենու երկար վարսերը, ար-եցնող (5) բուրմունք տարածեց թավշյա դեղձը՝ պ-ռուհու (6) նազանքով ու-ելով (7) մրգերի ծանրության տակ խոնարհած ճյուղերը: Ար-նացան (8) ծաղիկները՝ գինարբու-ը (9), սուսա-բարը (10), վարդը:

1) 1 - չ, 2 - թ, 3 - շշ, 4 - օ, 5 - բ, 6 - ճ, 7 - ղղ, 8 - թ, 9 - կ, 10 - ն
2) 1 - չ, 2 - դ, 3 -շ, 4 - օ, 5 - բ, 6 - ճ, 7 - ղ, 8 - թ, 9 - ք, 10 - ն
3) 1 - չ, 2 - թ, 3 - շշ, 4 - օ, 5 - բ, 6 - չ, 7 - ղղ, 8 - թ, 9 - կ, 10 - մ
4) 1 - չյ, 2 - թ, 3 - շ, 4 - ո, 5 - փ, 6 - ճ, 7 - ղղ, 8 - դ, 9 - ք, 10 - մ

47 **Ո՞ր շարքի բառերի բոլոր վանկերն են փակ.**

1) ընթերցել, ընկղմել, դազգահ, գանգատվել
2) գժդմնել, հիշեցնել, բնաշխարհ, բորբոքվել
3) հնչեցնել, հյուսվածք, բոցկլտալ, հյուրընկալ
4) ժանգոտվել, ժպտերես, ինքնավար, ինչքան

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում միասին.**

1) այս(պես), ի(զուր), մերձ(քաղաքային), հատ(ընտիր)
2) մաս(մաքուր), գլուխ(կոտրուկ), անդր(բևեռային), գազ(այրիչ)
3) խոսքի(մասային), գյուղե(գյուղ), հետ(ծննդյան), խեթ(խեթ)
4) փոխ(արքա), ըստ(ամենայնի), վեր(լուծել), ոչ(ինչ)

49 **Փակագծերում տրված բառերից կամ բառաձևերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

ա. Պատերազմի (1. հրձիգները, 2. հրաձիգները) շարունակում են աշխարհի տարբեր անկյուններում «ահաբեկչության» դեմ պայքարել՝ ծածկելով իրենց նավթային շահերը:
բ. Գյուղացին ուսին գցեց (1. մախաթը, 2. մախաղը) և քայլեց վանք տանող արահետով:
գ. Ջիգզագ ճանապարհով (1. ասպատակեցինք, 2. արշավեցինք) մի փոքր, և ձիերը դանդաղեցրին իրենց ընթացքը:
դ. Գարնանային արևի շողերից ոսկու շքեղությամբ փայլում էին նրա (1. դերձան, 2. դեղձան) վարսերը:

1) ա-2, բ-1, գ-2, դ-2
2) ա-1, բ-2, գ-1, դ-1
3) ա-2, բ-1, գ-1, դ-1
4) ա-1, բ-2, գ-2, դ-2

50 **Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա.**

1) **թրև գալ** - աննպատակ թափառել, **գլխին ոսկե անձրև տեղալ** - ամուսնանալ
2) **գազան կտրել** - կատաղել, **երկաթե գավազան** -բռնապետություն
3) **սիրտը կախ** - անտրամադիր, **խելքը հացի հետ ուտել** - հիմարանալ
4) **սիրտը վկայել** - կանխազգալ, **խաղաթղթերը խառնել** - ծրագրերը խափանել

51 **Տրված բառերից ո՞րն է կազմությամբ համապատասխանում բառակազմական հետևյալ կաղապարին՝ արմատ+հոդակապ+արմատ+վերջածանց.**

1) դերանվանական
2) վերաբացում
3) բայահիմք
4) պերճաշուք

52 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) բնավ-միշտ, պարպել-դատարկել, դյուրին-խրթին
2) անձուկ-ընդարձակ, նվաղ-փոքրոգի, խոսուն-համր
3) նզովք-օրհնություն, ճապաղ-սեղմ, ստերջ-բեղմնավոր
4) գոց-փակ, վտիտ-մարմնեղ, փութկոտ-ծանրաշարժ

53 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են սոսկածանցավոր:**

1) առել է, ընկերացող, պրծնել, իջավ
2) երկնչել, սառչել, հզորացած, պարծեցել
3) կմտնենք, հագել է, ունեցած, կանգնել
4) օտարացած, հանգավ, կառչելու, դիպել է

54 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բայերն են դրված ենթադրական եղանակով:**

1) կանվանեն, կարժևորվի, կխրխնջա, կուսանի
2) կառաքեմ, կառաջարկեմ, չեմ գժվի, կայցելես
3) կերգեմ, կխոսի, կաղաս, կայրեր
4) կարդուկեն, կոշտացնի, կուղղեմ, կարդարանա

55 **Ո՞ր նախադասության մեջ կապ *չկա:***

1) Բայց վառվում է դեռ մեր ակութներում
   Հինավուրց ուխտի կրակը անշեջ:
2) Բախտը ինձնից թռավ, գնաց
   Վերջալույսի շողերի մեջ:
3) Առանց ընկճելու երկրի թշնամուն՝
   Նրա սուրը երբեք չի մտել պատյան:
4) Ես գիտեմ՝ մի օր պիտի չքանաս
   Որպես մի երազ՝ չծնված բնավ:

56 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերաբերականներ:**

1) իրոք որ, այնքան, անգամ, սոսկ
2) միմիայն, ցավոք, թեև, իսկ և իսկ
3) մի՞թե, անկախ, ահա, ախր
4) գոնե, հապա, ահավասիկ, լոկ

57 **Տրված նախադասության մեջ ի՞նչ անդամ է հարակատար դերբայը:**

Վհատ սոսկումի տանջանքով կզգաս,
Որ որոնածդ բնավ չես գտնի:

1) ստորոգելի
2) ուղիղ խնդիր
3) ենթակա
4) հանգման խնդիր

58 **Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

Գիրքը հասցեագրված է բոլոր երեխաներին և այն մեծահասակներին, որոնք սիրում են մանկական գրքեր կարդալ:

1) Գիրքը հասցեագրված է բոլոր երեխաներին և մանկական գրքեր կարդալ սիրող մեծահասակներին:
2) Գիրքը հասցեագրված է բոլոր երեխաներին և մանկական գրքեր կարդալ սիրող այն մեծահասակներին:
3) Գիրքը հասցեագրված է մանկական գրքեր կարդալ սիրող բոլոր երեխաներին և մեծահասակներին:
4) Գիրքը հասցեագրված է բոլոր երեխաներին և մեծահասակներին՝ մանկական գրքեր կարդալ սիրողներին:

59 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):**

1. Դու այնպես ես խոսում, կարծես քեզ ոչինչ չի հետաքրքրում:
2. Ես լուռ հետևում էի, թե ինչպես էր նա հեռանում ինձանից:
3. Պարզ երևում էր, որ բոլորը նրանից դժգոհ էին:
4. Ինչու էր նա այդքան զայրացած՝ ես այդպես էլ չհասկացա:

ա. ձևի պարագա
բ. ուղիղ խնդիր
գ. հանգման խնդիր
դ. ենթակա
ե. պատճառի պարագա

1) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
2) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
3) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
4) 1-ա, 2-գ, 3-բ, 4-ե

60 **Ո՞րն է տրված բարդ նախադասության ստորադաս նախադասության պաշտոնը:**

Սաթենիկը գլուխը շուռ տվեց, որ որդին չնկատի իր դառն արցունքները:

1) ուղիղ խնդիր
2) միջոցի անուղղակի խնդիր
3) նպատակի պարագա
4) պատճառի պարագա

61 **Նախադասության նշված անդամներից ո՞րը *չի* կարող արտահայտվել գործիական հոլովով:**

1) միջոցի անուղղակի խնդիրը
2) հանգման անուղղակի խնդիրը
3) ձևի պարագան
4) ժամանակի պարագան

62 **Նշվածներից ո՞րը պոեմ *չէ:***

1) «Բիբլիական» (Հ. Շիրազ)
2) «Մեր պատմիչները և մեր գուսանները» (Ավ. Իսահակյան)
3) «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» (Պ. Սևակ)
4) «Հարճը» (Դ. Վարուժան)

63 **Գրական ո՞ր հերոսը որ ստեղծագործությունից է:**

ա. Արբակ	1. «Գևորգ Մարզպետունի» (Մուրացան)
բ. Շուշանիկ	2. «Վարդանանք» (Դ. Դեմիրճյան)
գ. դայակ Սեդա	3. «Հին աստվածներ» (Լ. Շանթ)
դ. իշխանադուստր Սեդա	4. «Սամվել» (Ռաֆֆի)

1) ա-4, բ-2, գ-1, դ-3
2) ա-1, բ-4, գ-3, դ-2
3) ա-1, բ-2, գ-4, դ-3
4) ա-4, բ-3, գ-2, դ-1

64 **Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.**

անդրի, բանբեր, ծովաթույր, լուրթ, երևի, գուցե, սուրհանդակ, երջանկահիշատակ, լուսահոգի, պատգամաբեր, լազուր, թերևս:

65 **Բառերից քանիսո՞ւմ ածանցի հնչյունափոխություն կա.**

պատմական, գործնական, կորստատեր, գիտունիկ, պատրանք, վայրենաբար, հետնադուռ, միջնորմ, համակրելի, կապուտաչյա:

66 **Տրված բանաստեղծական հատվածում քանի՞ մակդիր կա:**

Թե զինվոր տեսնեմ, մահ եմ սպասում,
Թե պատգամավոր՝ դառը խստություն…
Եթե տեսնում եմ ինձ հասնող բարիք,
Փախուստ եմ տալիս չար կասկածներով…

67 **Նշել՝ տրված համարների դիմաց գրվածներից որոնք կան տվյալ հատվածում (նախադասությունները կետադրված չեն):**

Այդ վայրկյաններին նրա աչքերը ցոլցլում էին քամին մեղմորեն ծածանում էր թավշյա մազերը ուրցի ծաղիկներով զարդարուն փռփռացնում դարձածալքերով շորը ընդգծելով վտիտ մարմինը: Մարանը ուրցի բույրով այդ աղջիկը սլացիկ հասակով մեկ կանգնում էր և անէացած նայում լուրթ երկնքին: Ներամփոփ հազիվ նկատելի նյարդային շարժումով նա անընդհատ հյուսում-քանդում էր ծամերը:

1. տրոհվող հատկացուցիչ
2. բազմակի անդամներ
3. բացահայտիչ
4. տրոհվող որոշիչ
5. տրոհվող դերբայական դարձված

68 **Ըստ հաջորդականության՝ նշել, թե որ հատվածը Եղիշե Չարենցի որ ստեղծագործությունից է:**

- Որպես լքված թավջութակի ճգված մի լար՝
  Դողում է սիրտս կարոտով մի ահարկու.
  Կարոտներիս գագաթն է այն՝ վերջի՜ն քնար.-
  Մի պիրկ պարան ու երկնուղեշ փայտեր երկու:
- Այս ամրոցի օդում՝ մգլահամ ու ճնշող՝
  Ստվերներ են շրջում օրհասական,-
  Եվ անցյալի մռայլ ոտնաձայնն է հնչում
  Ինչպես մահվան քայլերգ հերոսական…
- Մեռած Քաղաքում ոչ մի մարդ չկար:
  Եվ ամայացած շենքները ավեր,
  Մութ, մահատեսիլ կույրերի նման
  Փորած աչքերով նայում էին վեր:
- Գիշերը չէր քնել:- Քրքրել էր թղթերը,
  Երկար թերթել թերթերը բազմաթիվ.-
  Օրագրեր, գրքեր, ձեռագրեր,
  Գրություններ՝ մնացած դեռ Դորպատից:

1. «Դանթեական առասպել», 2. «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում», 3. «Դեպի լյառը Մասիս», 4. «Մահվան տեսիլ»:

69 **Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ** ***չկա:***

Մի քանի անգամ փորձեցի խոսել հետը՝ գիտենալու համար՝ արդյոք հա՞մր է, բայց նա աչքերը չռում էր, նայում էր երեսիս ապուշի պես, ապա ժպտում էր և նորից գլուխը կրծքին թեքում:

1. **բայց** – համադասական շաղկապ, **պես** – կապ, հետադրություն
2. **նորից** – մակբայ, **նայում էր** - անկատար անցյալ, ներգործական սեռ
3. **մի քանի** – որոշյալ դերանուն, **խոսել** - անորոշ դերբայ, չեզոք սեռ
4. **գիտենալու** - ապակատար դերբայ, ածանցավոր, **համար** – կապ, հետադրություն
5. **արդյոք** – վերաբերական, **թեքում էր** – սահմանական եղանակ, չեզոք սեռ

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:**

1. Բայի ներկա ժամանակը հնարավոր է արտահայտել միայն սահմանական եղանակով:
2. Բոլոր ձևաբայերը կազմում են սահմանական եղանակի ժամանակաձևեր:
3. Սահմանական եղանակը ունի բայի բոլոր ժամանակները:
4. Սահմանական եղանակը ունի միայն բաղադրյալ ժամանակաձևեր:
5. Որոշ բայեր սահմանական եղանակի մի քանի ժամանակաձևեր չունեն:
6. Սահմանական եղանակի ոչ բոլոր ժամանակաձևերն են կազմվում ձևաբայերով: